*ՆԱԽԱԳԻԾ*
*(լրամշակված տարբերակ)*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ՀՕ-374-Ն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր կետերով.

«ժբ) ջրի արդարացի բաշխման նպատակով՝ դիմել և ստանալ իր ներկայացուցչական գոտուց ընտրված ներկայացուցչից իր հողատարածքն ընդգրկող հիդրոմիավորի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ կազմված պլան ժամանակացույցը և ջրօգտագործողների փաստացի ներկայացված ջրման հայտերի հիման վրա տրամադրված ջրաքանակները:

ժգ) ոռոգման ջրի պաշարների դեֆիցիտի պայմաններում՝ մասնակցել ջրօգտագործման պլանների, պլան ժամանակացույցի, ջրօգտագործողների անհատական պայմանագրի համապատասխան հավելվածների վերանայմանը:

ժդ) իրենց խախտված իրավունքը վերականգնելու նպատակով՝ դիմել վեճեր լուծող հանձնաժողովին, ներկայացնել փաստարկներ և կարծիքը հիմնավորող ապացույցներ, ինչպես նաև մասնակցել դրանց հետազոտմանը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Deleted:**

**Deleted:** (այսուհետ՝ Օրենք) 5.1

**Deleted:** «գ) պահանջել

**Deleted:** ընկերության տնօրինությունից

**Deleted:**

**Deleted:** ամբողջ ոռոգման ջրամատակարարման ռեժիմն ու փաստացի իրականացված ջրաբաշխման հաշվեկշիռն՝ ըստ առանձին

**Deleted:** ջրապահանջի,

**Deleted:** է) նույն հիդրոմիավորումում ընդգրկված ջրօգտագործողների ընդհանուր թվի առնվազն երկու տոկոսի մասնակցությամբ՝ ընկերությանը ներկայացնել և ընկերության վարչական խորհրդում սահմանված կարգով քննարկել ջրաբաշխման հաշվեկշիռն՝ ըստ առնածին մշակաբույսերի ոռոգման ռեժիմի և նորմայի կազմած չլինելու, ինչպես նաև առանձին ջրօգտագործողների կողմից ոռոգման ռեժիմի և/կամ նորմայի խախտման վերաբերյալ հարցերը:»:¶

**Deleted:** Օրենքի 11-րդ հոդվածի երրորդ մասը լրացնել նոր կետով՝ ¶
«ե) մեկ ոռոգման շրջանում երկու անգամից ավել խախտել է ոռոգման ռեժիմն ու նորման և վնաս հասցրել նույն ընկերության այլ անդամների հողատարածքների ոռոգման գործընթացին:»:¶
**Հոդված 3.**